ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 26 » դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-123/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ի 09.12.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 09.12.2016թ. ներկայացրած բողոքով Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Երևան քաղաքի փողոցների,

հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների մասնակի և ամբողջական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) կազմակերպել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված պահանջների խախտմամբ:

Գնումների պլանը, ներառյալ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող աշխատանքային 2 օրվա ընթացքում Պատվիրատուն հրապարակում է Տեղեկագրում՝ www.gnumner.am էլեկտրոնային կայքում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի: 20.10.2016թ. Ընթացակարգի հրապարակման պահին գնումների 17.10.2016թ. պլանում նախատեսված չի եղել հրավերով նախատեսված աշխատանքի գնումը, չի համապատասխանում աշխատանքի, ապրանքի, ծառայության անվանումն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ԳՄԱ կոդ (CPV) և այլն, գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Ա/Ձ-ն նշել է, որ Երևանի քաղաքապետարանը գնումների գործընթացն իրականացրել է օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Ա/Ձ-ն նշել է, որ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգն անցկացնելիս վերը նշված պահանջը խախտել է, քանի

որ 17.10.2016թ. պլանում նախատեսված չի եղել հրավերով նախատեսված ապրանքների գնումը:

Միայն 25.11.2016թ. Երևանի քաղաքապետարանի կողմից հրապարակվել է գնումների պլանի փոփոխություն (այսինքն մրցույթի հայտարարությունը հրապարակվել է 17.10.2016թ., իսկ գնում առաջանալու պահանջը ձևավորվել և հրապարակվել է 25.11.2016թ., այնինչ 29.11.2016թ. Ընթացակարգի իրականացման վերջնաժամկետն է), որում ևս չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող աշխատանքի (ապրանքի) ծառայության անվանումն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ԳՄԱ կոդ (CPV) և այլն:

Համաձայն Կարգի 22-րդ կետի՝ գնումների նախապատրաստման նպատակով գնումների պլանում ներառված գնման յուրաքանչյուր առարկայի համար գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում է՝

1) պատասխանատու ստորաբաժանում,
2) գնումները համակարգող:

Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռք բերման համար նախատեսված առավելագույն գինը:

Ըստ Ա/Ձ-ի՝ Ընթացակարգի հրավերում չի պահպանվել վերը նշված պահանջը, չի սահմանվել մեկ միավորի ձեռք բերման համար նախատեսված առավելագույն գինը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ և 48-րդ հոդվածներով՝ Ա/Ձ-ն խնդրել է դադարեցնել և ապօրինի հայտարարել Ընթացակարգը, չեղյալ համարել Ընթացակարգը, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց՝ դադարեցնել պայմանագրի կնքումը, մինչև սույն բողոքի քննման ավարտը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.12.2016թ. թիվ 02/61-28524 գրությամբ Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 28.04.2016թ. թիվ 73-3/13129-16 գրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը սույն թվականի սեպտեմբեր ամսից իրականացնում է էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության նոր մոդուլների շահագործումը, որոնք գործում են www.armeps.am/ppcm կայքում:

Նշվածի համաձայն՝ գնման գործարքները մուտքագրվում են պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլում՝ ըստ գործածման ձեռնարկի:

Երևանի քաղաքապետարանը բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին ծանուցումները, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման փոփոխությունները, որոնցով նախատեսվում են գնումների պլանում փոփոխությունները և/կամ լրացումներ կատարելու մասին ծանուցումները, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման փոփոխությունները, որոնցով նախատեսվում են գնումների պլանում փոփոխությունները և/կամ լրացումները ներառում է գնումների պլանավորման մոդուլում՝ ըստ գործածման ձեռնարկի:

Հիշյալ համակարգի ներդրման վերաբերյալ սույն թվականի հուլիս ամսին ՀՀ և Արմենիա հեռուստատեսություններում կազմակերպվել և հանրությանն է իրազեկվել էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության նոր մոդուլների շահագործման վերաբերյալ առկա առավելությունները:

Վերը նշվածի համաձայն՝ Պատվիրատուն գտել է, որ բողոք բերած անձի այն պնդումը, որ Երևանի քաղաքապետարանը խախտել է օրենքը և գնման գործընթացը կազմակերպել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և հրապարակված գնումների պլանի առկայության (առանց իրավական հիմքի) անհիմն է, քանի որ էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության նոր մոդուլների շահագործումը, որոնք գործում են www.armeps.am/ppcm կայքում, հանրության համար մատչելի է և հրապարակվում է

պետական գերատեսչությունների և քաղաքային հիմնարկների գնման գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը՝ ներառյալ գնումների պլանը և նրանում կատարված փոփոխությունները և/կամ լրացումները, որի բացակայության պարագայում էլեկտրոնային համակարգը թույլ չի տալիս պատվիրատուին կազմակերպել գնման գործընթաց:

Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ն նշել է, որ գնման առարկան չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող աշխատանքի անվանմանն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ԳՄԱ կոդի և այլն, ապա տեղեկացնում եմ, որ ԳՄԱ-ն կազմված է թվային դասակարգիչներից, որի հիմնական անվանացանկը կազմված է մինչև ութ նիշ ունեցող ծածկագրերից, որոնք կապված են պայմանագրի առարկան հանդիսացող գնման առարկան նկարագրող բառերի հետ, որն էլ իր հերթին ներառված է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով հաստատված գնումների միասնական անվանացանկում:

Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է, որ www.armeps.am/ppcm էլեկտրոնային տեղեկագրում հրապարակված գնումների պլանում ներառված գնման առարկան համապատասխանում է Ընթացակարգի հրավերով պահանջվող տնտեսական դասակարգման հոդվածին՝ 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում), որտեղ նաև նշված է գնման առարկայի պահանջվող ծավալը, որի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը չէր կարող նախատեսվել այն հիմքով, որ տվյալ գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ www.armeps.am/ppcm էլեկտրոնային համակարգը թույլ է տալիս հանրությանը տեղեկանալ պետական գերատեսչությունների և քաղաքային հիմնարկների գնման գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը, ինչպես նաև մասնակցել armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգերին, ուստի Պատվիրատուն գտնում է, որ Ա/Ձ-ի պահանջն անթույլատրելի է, բացի այդ Երևանի քաղաքապետարանը վերը նշված Ընթացակարգը կազմակերպել է բաց ընթացակարգով, որով ապահովել է «Գնումների մասին» ՀՀ

օրենքով և այլ իրավական ակտերով երաշխավորված առավելագույն մրցակցային դաշտը:

3. <u>ԳԲԽ-123/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-123/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների մասնակի և ամբողջական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Երևանի քաղաքապետարանի կողմից 2016թ. գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում ***<u>25.11.2016թ.</u>***:

3. Պատվիրատուն Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակել է տեղեկագրում՝ www.gnumner.am համացանցային կայքում ***<u>21.10.2016թ.-ին:</u>***

4. <u>ԳԲԽ-123/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 15.12.2016թ. թիվ 02/61-28524 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնումների նախապատրաստում.

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: ***Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:*** Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը*** սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև ***հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:***

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի այլ միջոցների հաշվին իրականացվող ***գնումների պլանում փոփոխությունները կատարվում են տվյալ գնումների պլանի հաստատման կարգով:***

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ ***Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝*** ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման

նպատակով համաձայնագիրը կնքվում է գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը պատվիրատուի ղեկավարը հաստատում է գնումների պլանը և յոթ աշխատանքային օրվա ընթացքում ***սահմանված կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:***

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների մասնակի և ամբողջական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է տեղեկագրում՝ www.gnumner.am համացանցային կայքում ***21.10.2016թ.-ին,*** իսկ 2016թ. գնումների փոփոխված պլանը հրապարակվել է ավելի ուշ՝ ***25.11.2016թ.***:

Կենտրոնն արձանագրում է, որ Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ նախ գնումների պլանավորում, հետո միայն գնումների նախապատրաստում.

Ավելին, համաձայն Կարգի 15-րդ կետի՝ ***գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է***, իսկ Կարգի 16-րդ կետի համաձայն՝ ***գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը հրապարակված գնումների պլանի առկայությունն է:***

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն դիրքորոշմանը, որ 2016թ. հուլիս ամսին Հ1 և Արմենիա հեռուստատեսություններում կազմակերպվել և հանրությանն է իրազեկվել էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության նոր մոդուլների շահագործումը, որոնք գործում են www.armeps.am/ppcm կայքում, ինչը հանրության համար մատչելի է և հրապարակվում է պետական գերատեսչությունների և քաղաքային հիմնարկների գնման գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը՝ ներառյալ գնումների պլանը և նրանում կատարված փոփոխությունները և/կամ լրացումները, ապա այս կապակցությամբ Կենտրոնը հայտնում է, որ Կարգի 21-րդ կետի համաձայն՝ հաստատված գնումների

պլանը ***սահմանված կարգով և ժամկետում հրապարակվում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:***

Կենտրոնը գտնում է, որ նման պայմաններում, Պատվիրատուն Ընթացակարգի հայտարարությունից ուշ հրապարակելով գնման պլանի փոփոխությունը, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերը նշված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Բաբկեն Ռոստոմյան Ա/Ձ-ի կողմից 09.12.2016թ. ներկայացված բողոքը բավարարել. Դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների կահավորման նպատակով աղբամանների և նստարանների մասնակի և ամբողջական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով բաց ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը, իսկ պայմանագիր կնքված լինելու դեպքում Ընթացակարգը հայտարարել ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-123/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան